



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« 25 » հունվարի 2018 թ.

N 02/10.1/1057-18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթեյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-243-24.01.2018-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունվարի -ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 40 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐԲՈՒՄ ՓՈՓՈ-
ԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-243-24.01.2018-ՏՀ-011/0)
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխու-
թյուններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նա-
խագծի՝

1. 2-րդ հոդվածի 2-րդ կետով առաջարկվող՝ օրենսգրքի 276-րդ հոդվածի 3-րդ մասի
12-րդ կետից հանել երկրորդ նախադասությունը, քանի որ օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին
մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտարարություն ներկայացնելու դեպքում հայտարա-
րությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող
20-րդ օրվանից ոչ շուտ) հարկ վճարողը համարվում է ԱԱՀ վճարող: Միաժամանակ, որպես
հարցի կարգավորման այլընտրանքային տարբերակ, առաջարկում ենք նշյալ երկրորդ
նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն կետով սահմանված
դեպքում հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու
օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև հայտարարությունում նշված հարկային
տարվա ավարտը հարկ վճարողը համարվում է ԱԱՀ վճարող»:

Առաջարկվող փոփոխությունը, նախ, համահունչ է հայտարարության հիման վրա ԱԱՀ
վճարող համարվելու համար օրենսգրքով տրված համանման կարգավորումներին: Դա
նշանակում է, որ միայն ուղևորափոխադրման մասով ԱԱՀ վճարող համարվելու համար
օրենսգրքով սահմանված ժամկետից տարբերվող այլ ժամկետ սահմանելու դեպքում հարկ
վճարողների և հարկային մարմնի կողմից հաշվառման վարման, հարկային պարտավո-
րությունների հաշվարկման առումով լրացուցիչ հիմնախնդիրներ կառաջանան (այդ թվում՝
ծրագրավորման լրացուցիչ աշխատանքներ կատարելու առումով)՝ հաշվի առնելով նաև այն
հանգամանքը, որ 2018 թվականի հունվարի 1-ից հարկային մարմնում հարկային պարտա-
վորությունների հաշվառումը պետք է իրականացվի էլեկտրոնային եղանակով:

Բացի դրանից, մեր կողմից առաջարկվող տարբերակը հարկ վճարողին հնարավորություն է ընձեռում հետին ամսաթվով դառնալ ԱԱՀ վճարող և, միաժամանակ, չի սահմանափակում հարկ վճարողի հնարավորությունը՝ ապագա ցանկացած ամսվա սկզբից համարվել ԱԱՀ վճարող:

2. 2-րդ հոդվածի 3-րդ կետում և 4-րդ հոդվածի 2-րդ կետում «ավելացնել» բառը փոխարինել «լրացնել» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջները:

3. 5-րդ հոդվածում «հունվարի 20-ը» բառերը փոխարինել «հունվարի 31-ը» բառերով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում կատարված վերջին փոփոխություններով պայմանավորված՝ բազմաթիվ հարկ վճարողներ հնարավորություն չեն ունեցել սահմանված ժամկետում էլեկտրոնային եղանակով ներկայացնել արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարություններ:

Միաժամանակ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նույնպես մտահոգ է նախագծով ներկայացված խնդրի կարգավորմամբ և այդ նպատակով մշակել է օրենքի նախագիծ: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության կառավարությանը համարել ներկայացված նախագծի համահեղինակ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունվարի 2018 թվականի N 40 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Դավիթ Անանյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-243-24.01.2018-ՏՀ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Վ. ԳԱՐԻԻԵԼՅԱՆ

2018 թ. հունվարի 25
Երևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐ ԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային ՀՕ-165-Ն օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 64-րդ հոդվածի 2-րդ մասի 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<18) պետական կառավարման մարմինների և (կամ) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այն ծառայությունների մատուցումը, որոնց համար օրենքով սահմանված է պետական տուրքի և (կամ) տեղական տուրքի վճարում, ինչպես նաև պետական կառավարչական և (կամ) համայնքային կառավարչական հիմնարկների կողմից ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումը՝ այն մասով, որից հասույթը հաշվեգրվել է պետական կամ համայնքների բյուջեների օգտին: Սույն կետի կիրառության իմաստով, հասույթի կամ դրա մի մասի հաշվեգրումը պետական կամ համայնքների բյուջեների օգտին պետք է հիմնավորվի դրանց համապատասխան գանձապետական հաշվին փոխանցմամբ: >>

Հոդված 2. Օրենսգրքի 276-րդ հոդվածի՝

- 1) 2-րդ մասի 3)-րդ կետի <<տասնութը>> բառը փոխարինել <<տասնյոթը>> բառով:
- 2) 3-րդ մասը լրացնել նոր 12)-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

<<12) ավտոբուսներով և (կամ) միկրոավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրումները, եթե հարկ վճարողը Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն ներկայացրել է հայտարարություն՝ ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառելու մասին: Սույն կետով սահմանված դեպքում հայտարարությունն նշված օրվան հաջորդող ամսվա սկզբից մինչև հայտարարությունում նշված հարկային տարվա ավարտը հարկ վճարողը համարվում է ԱԱՀ վճարող:>>:

- 3) 4-րդ մասի <<գործունեության տեսակների>> բառերից հետո ավելացնել <<(բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասի 12-րդ կետով սահմանված գործունեության) բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 277-րդ հոդվածի՝

- 1) 1-ին մասի աղյուսակում <<Ավտոբուսով ուղևորափոխադրում>> և <<միկրոավտոբուսով ուղևորափոխադրում>> տողերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Ավտոբուսով ուղևորափոխադրում	ավտոբուսների քանակ	1800 դրամ
Միկրոավտոբուսով ուղևորափոխադրում	միկրոավտոբուսի քանակ	2300 դրամ

- 2) 2-րդ մասից հանել <<ավտոբուսով կամ միկրոավտոբուսով>> բառերը:

Հոդված 4. Օրենսգրքի 279 -րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

1) << 1. Միայն մեկ հաշվետու ամիս ներառող հաշվետու ժամանակաշրջանի, ինչպես նաև ավտոբուսով և (կամ) միկրոավտոբուսով իրականացվող ուղևորափոխադրումների գործունեության մասով մեկից ավելի հաշվետու ամիսները ներառող հաշվետու ժամանակաշրջանի համար արտոնագրային հարկի հաշվարկման նպատակով արտոնագրային հարկի հաշվարկման գործակիցը սահմանվում է 1.0: Մեկից ավելի հաշվետու ամիսներ ներառող հաշվետու ժամանակաշրջանի համար (բացառությամբ ավտոբուսներով և (կամ) միկրոավտոբուսներով ուղևորափոխադրումների գործունեության տեսակի) արտոնագրային հարկի հաշվարկման գործակիցը որոշվում է՝ մեկ հաշվետու ամսվա համար սահմանված՝ 1.0

գործակիցը նվազեցնելով հաշվետու ժամանակաշրջանում ներառված մեկից ավելի հաշվետու ամիսների քանակի և 0.02-ի արտադրյալի չափով:>>:

2) 2-րդ մասում ավելացնել նոր 9)-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

<<9) երթուղու հետ կապված ավտոբուսներով և (կամ) միկրոավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրումների համար՝

ա. Երկու քաղաքների միջև, բայցությամբ Երևան քաղաքի 1.0
(այսուհետ՝ միջքաղաքային)

բ. Երևան քաղաքի հետ

1.2

գ. Ներմարզային՝ բացառությամբ միջքաղաքային և ներքաղաքային՝

- Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերում 0.75

- այլ մարզերում 0.5

դ. Ներքաղաքային երթուղիների համար՝

- Երևան քաղաքում 1.0.

- Գյումրի և Վանաձոր քաղաքներում 0.9

մնացած քաղաքներում 0.8

Միևնույն հաշվետու ժամանակաշրջանում տարբեր բնակավայրերում կամ տարբեր բնակավայրերի միջև ավտոբուսով և (կամ) միկրոավտոբուսով միջմարզային (բացառությամբ՝ միջքաղաքային և Երևան քաղաքի հետ) երթուղիներով ուղևորափոխադրումների իրականացման դեպքում կիրառվում է այդ մարզերի համար սույն կետի գ) ենթակետով սահմանված գործակիցներից առավելագույնը:>>:

Հոդված 5. Օրենսգրքի 455 -րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

<<3. Օրենսգրքի 276-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գործունեության տեսակներ (բացառությամբ՝ ավտոբուսներով և (կամ) միկրոավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրման գործունեության տեսակի) իրականացնող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը 2018 թվականի հունվար ամիսը ներառող հաշվետու ժամանակաշրջանի համար արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարությունը ներկայացնում են և արտոնագրային հարկի վճարումը կատարում են մինչև 2018 թվականի հունվարի 20-ը ներառյալ: Կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը ավտոբուսներով և (կամ) միկրոավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրման մասով 2018 թվականի հունվար և (կամ) փետրվար ամիսների համար արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարությունը ներկայացնում են մինչև 2018 թվականի մարտի 1-ը ներառյալ, իսկ 2018 թվականի հունվար և (կամ) փետրվար ամիսների համար ավտոբուսներով և (կամ) միկրոավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրման համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված արտոնագրային հարկի վճարման ժամկետ է սահմանվում մինչև 2018 թվականի հունիսի 20-ը ներառյալ:>>:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից և կիրառվում է 2018 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

Հիմնավորում

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).** Նախագծի նպատակը պետական և տեղական կառավարչական հիմնարկների կողմից իրականացվող ԱԱՀ-ով հարկվող գործարքների մասով հարկման մոտեցումների վերանայումը, ինչպես նաև ուղևորափոխադրումներ իրականացման գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների համար հարկային բեռի անփոփոխ պահպանելն է:

2. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.** 2018 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ հարկային օրենսգրքով կատարված փոփոխությունների արդյունքում՝

ա. ՀՀ հարկային օրենսգրքից դուրս է մնացել պետական և տեղական կառավարչական հիմնարկների կողմից իրականացվող ԱԱՀ-ով հարկվող գործարքները ԱԱՀ-ից ազատելու մասին նախկին օրենսդրությամբ գործող իրավակարգավորումները,

բ. ուղևորափոխադրումների գործունեության հարկումը հաստատագրված վճարների համակարգից արտոնագրային հարկի համակարգ տեղափոխելու և արտոնագրային հարկի համակարգի առանձնահատկություններով պայմանավորված տեղի է ունեցել ուղևորափոխադրումներով զբաղվող տնտեսավարող սուբյեկտների հարկային բեռի որոշակի վերանայումներ, որոնք կարող են բացասաբար արդարադառնալ ոլորտում իրականացվող գործունեության վրա:

3. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.** Նախագծով առաջարկվում է՝

ա. պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ԱԱՀ-ով հարկվող գործարքները (այդ թվում՝ տեղական տուրքի կամ վճարի վճարում ենթադրող) ազատվում են ԱԱՀ-ից,

բ. վերանայել ուղևորափոխադրումների գծով արտոնագրային հարկի բեռի այն պահպանելով նախկին մակարդակում՝ միաժամանակ ուղևորափոխադրումներով զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին հնարավորություն տալով իրենց կամքով համարվել ԱԱՀ վճարող:

4. **Կարգավորման առարկան.** Նախագծի կարգավորման պետական և տեղական ինքնարակառավարման մարմինների կողմից իրականացվող ԱԱՀ-ով հարկվող գործարքների ԱԱՀ-ից ազատումն է և ուղևորափոխադրումների գծով հարկային բեռի վերանայումը: